

## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՌՆՈՒՎԻԼՈՒՄ

**Հունիսի 8-ին, կիրակի:** Հոգեգալուստ:

Առավոտյան ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետը ժամանեց Առնուվիլ լե Գոնես և պաշտոնական այցելություն տվեց քաղաքագլուխ Կլոդ Բիժելին, որը, շրջապատված քաղաքապետարանի իր խորհրդականներով, ջերմորեն ընդունեց Հայոց Հայրապետին և առաջնորդեց Նրան քաղաքապետարանի դահլիճ, ուր Նրան ողջունեց բարիգալստյան հետևյալ ուղերձով.

### ԱՌՆՈՒՎԻԼԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ԿԼՈԴ ԲԻԺԵԼԻ ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ԽՈՍՔԸ

Այսօր մենք պատիվը և ուրախությունն ունենք մեր մեջ ընդունելու հայ առաքելական եկեղեցու ամենաբարձր ներկայացուցչին՝ Նորին Սրբություն Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին:

Այս այցելությունը վկայությունն է այն լավ հարաբերությունների, որոնք գոյություն ունեն հայ և ֆրանսիացի ժողովուրդների ու նաև Առնուվիլի մեր համայնքների միջև:

Մենք մաղթում ենք, որ այդ հարաբերություններն առավել սերտանան և վերածվեն եղբայրական համագործակցության ի ծառայություն բոլորի, մեր այս փոքրիկ քաղաքում, ապա նաև մեր երկրում և մեր ժողովուրդների միջև:

Առնուվիլում բարի կամեցողության տեր շատ մարդիկ կան. մեր բոլորի ներկայությունն այստեղ դրա ցայտուն արտահայտություններից մեկն է, և այդ բարի կամեցողությունն ինքնին արդեն լավագույն երաշխիք է խաղաղության:

Մնում է մեզ աշխատել միասին՝ առնուվիլցի հայերին, ֆրանսիացիներին կամ այլ ազգությունների պատկանող մեր եղբայրներին հաղորդակից

դարձնելու համար ապագայի նկատմամբ ունեցած մեր հավատին, լավագույն մի աշխարհի նկատմամբ տածած մեր հույսին, ինչպես նաև բաժնեկից դարձնելու համար նրանց մեր եղբայրական բարեկամության:

Հոգեգալստյան այս տոնական օրը, երանի՜ կարողանայինք հասկանալ իմաստն այն պատգամի, որը 2000 տարվա հնություն ունի, բայց որը հավետ կենդանի այժմեականություն է ներկայացնում և մեզ հրավիրում հետեվելու այն ճանապարհին, որն առաջնորդում է մեզ դեպի ավելի արդար, նվազ եսապաշտ և ավելի սիրառատ մի աշխարհ, որ յուրաքանչյուրիս մաղթանքը և հույսն է:

Հայոց Հայրապետը, պատասխանելով մեծարգո քաղաքագլխի ողերձին, արտահայտեց Իր երախտագիտությունը Ֆրանսիայի բարեխնամ կառավարությանը և նրա բարձրաստիճան ղեկավարներին այն բոլոր ազատությունների և բարենպաստ պայմանների համար, որոնցում ապրում են հայերը ասպետական Ֆրանսիայում՝ պահպանելով, անվթար ու ամբողջական, իրենց եկեղեցին և ազգային ավանդությունները, լեզուն և մշակույթը: Հայոց Հայրապետը Իր երախտագիտական խոսքն ավարտեց՝ բարեմաղթելով՝ «Թող Աստված խաղաղության և բարգավաճ բարօրության մեջ պահի-պահպանի Ֆրանսիան և Առնուվիլի այս գեղեցիկ շրջանը»:

## ՊԱՏԱՐԱԳ ԱՌՆՈՒՎԻԼԻ ՀԱՅՈՑ ՎԱՐԱԳԱ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Օրվա տոնի առիթով ս. պատարագ մատուցեց Վեհափառ Հայրապետի գավազանակիր տ. Մասիս վրդ. Գալստյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզեց Վեհափառ Հայրապետը:

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ԱՌՆՈՒՎԻԼԻ ՎԱՐԱԳԱ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

**«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:**

**Սիրելի հավատացյալ ժողովուրդ,**

**Մեր ուղևորությունը Աստուծո ողորմությամբ կմոտենա իր վախճանին, իր վերջավորության: Արդեն ճիշտ մեկ ամիս է, որ կգտնվինք ասպնջական Ֆրանսայի հողին վրա: Այցելեցինք, ինչպես տեղյակ եք արդեն, բազմաթիվ հայաշատ քաղաքներ՝ Մարսիլիա, Նիս, Բորդո, Վալանս, Սենտ-Էտիեն, Լիոն, Փարիզ և ահավասիկ Մեր վերջին օրհնությունը կբերենք նաև ձեզի՝ Առնուվիլի հայ եկեղեցական համայնքին և բոլոր մեր հավատացյալ զավակներուն:**

**Այս առիթով սրտի պարտք կնկատենք Մեր բարի մաղթանքները և օրհնությունը բերելու Առնուվիլ քաղաքի համայն բնակչության և հատկապես ձեր սքանչելի քաղաքապետ, ձեր հայասեր քաղաքապետ պր. Կլոդ Բիժելին, որ այնքան բացառիկ ջերմությամբ, հարազատությամբ, եղբայրական զգացումներով կրնամ ըսել, ընդունեց Մեզ այսօր քաղաքապետարան: Մենք կրկին անգամ նաև այս սուրբ բեմեն Մեր շնորհակալությունը կհայտնենք մեծարգո քաղաքապետին և Մեր բարի մաղթանքներն ու օրհնությունը իր բարձր անձին, իր ընտանիքին և այս ամբողջ քաղաքին, որուն արժանավոր և շինարար վերակացուն է ան:**

«Եւ լցան ամենեքեան Հոգւովն սրբով»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Այսօր Հոգեգալուստ է, այսինքն հիսուներորդ օրը Հիսուսի հարության: Մեր սուրբ եկեղեցին, ինչպես ամբողջ քրիստոնյա աշխարհը, մեծ շուքով կտոնախմբե հիշատակը սուրբ Հոգվո գալստյան հրաշալի դեպքին: «Գործք առաքելոց»-ի մեջ կպատմվի մեզի, թե Քրիստոսի հարութենեն և համբարձումեն վերջ, իր բոլոր աշակերտները տխուր, գրեթե հուսահատ վիճակի մեջ էին, ինքզինքնին կնկատեին որբացած, որովհետև չկար այլևս աստվածային իրենց Վարդապետը: Անոնք հաճախ կհավաքվեին բնակարանի մը մեջ և միասին կհիշեին Հիսուս Քրիստոսը, կհիշեին իր քաղցր դեմքը, իր բարի հայացքը, իր խաղաղարար աչքերը, կհիշեին, մանավանդ, իր խոսքերը, իր պատգամները, կհիշեին հրաշքները զոր կատարեց, և ահա այս հիշատակներով կապրեին, կմխիթարվեին և այսպեսով սպասումի մը մեջ էին, թե նոր հրաշքով մը Հիսուս պիտի հայտնվի նորեն: Անոնք կհիշեին մանավանդ Հիսուսի խոստումը թե պիտի ուղարկե մխիթարիչը՝ Հոգին սուրբ:

Եվ Հիսուսի հարության ճիշտ հիսուներորդ օրը երբ աշակերտները նորեն հավաքված էին վերնատան մեջ և Աստվածամայրն ալ իրենց հետ, հանկարծ լսվեցավ դղրդյուն, սկսավ շարժում մը երկրաշարժի նման, երկինքեն լույսեր բացվեցան և սկսան վար իջնել բոցերու նման, լեզուներու նման: Եվ տակավին մեղմիկ իջան այդ լույս շողերը աշակերտներեն յուրաքանչյուրի գլխուն վրա, լուսավորելով զանոնք: Այս սքանչելի տեսարանին առջև Հիսուսի աշակերտները խոր հուզումով ցնցվեցան, պահ մը նույնիսկ ինքզինքնին կորսնցուցին, կարծես գինովցան և շփոթեցան: Սակայն քիչ հետո ուշքի եկան, և պայծառացան իրենց հոգիները: Բացվեցան իրենց հոգիներուն աչքերը և զգացին, որ իրոք հզոր ուժ մը կերպարանափոխած է իրենց ամբողջ էությունը, իրենց հոգեկան աշխարհը: Եվ սկսան խոսիլ ճարտար կերպով, նույնիսկ տարբեր լեզուներով, լեզուներ, որոնք իրենց ծանոթ չէին, որովհետև առաքյալները պարզ, համեստ, արհեստավոր մարդիկ էին: Ու այդ պահուն անոնք հիշեցին մեծ Վարդապետի խոստումը, թե մխիթարիչ սուրբ Հոգին պիտի իջնե իրենց վրա. և հասկցան, թե ահա այդ պահուն է, որ կատարվեցավ նոր հրաշքը, և իրենք ընդունեցին սուրբ Հոգվո զորությունը, լույսը իրենց Էության մեջ: Անոնք վերածնած մարդիկ դարձան, կերպարանափոխվեցան, ինչպես Հիսուս պայծառակերպված էր Թաբոր լեռան վրա: Իրենց տխրությունն ալ փարատեցավ և ինքզինքնին այլևս որբացած չնկատեցին, ինքզինքնին զորացած զգացին և իրենց մեջ հաստակացավ գիտակցությունը, թե ահավասիկ սուրբ Հոգվո զորությունը ընդունելով՝ այժմ իրենք պետք է գործի անցնին, աշխատանքի անցնին և իրականացնեն Հիսուսի վերջին պատգամները՝ «Գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս և մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ»: Հիսուսի աշակերտները այդ վայրկյանեն դարձան առաքյալներ, այսինքն Հիսուսի կողմե ուղարկված մարդիկ, անոր անունով քարոզող մարդիկ, Հիսուսի Ավետարանի լույսը տարածողներ: Անոնք սկսան իրենց գործունեության, շատերը հեռանալով Երուսաղեմեն, ոմանք դեպի հյուսիս, ոմանք դեպի արևելք, ոմանք դեպի արևմուտք:

Այսպես ահա սկիզբ առավ առաքելական գործը, այսպես սկիզբ առավ հիմնադրումը քրիստոնեական համայնքներուն, եկեղեցիներուն:

Այսպիսով, աշխարհով մեկ տարածվեցավ Քրիստոսի Ավետարանի

լույսը: Առաքյալներեն երկուքը՝ սուրբ Թադեոս և սուրբ Բարթուղիմեոս, եկան մինչև Հայաստան աշխարհ, առաջին սերմերը ցանեցին քրիստոնեական հավատքին: Այդ սերմերը պարարտ հողի մեջ ինկան: Հայ ժողովուրդը առաջիններեն մեկը եղավ, որ իր սիրտը բացավ Քրիստոսի լույսին: Կազմվեցան համայնքներ, հետզհետե ավելի լայն շրջանակներով, նույնիսկ եկեղեցական նախնական կազմակերպություններ՝ իրենց գլուխը ունենալով եպիսկոպոսներ:

Իսկ չորրորդ դարու սկիզբը, ս. Գրիգոր Լուսավորչի երանելի օրերուն, քրիստոնեությունը վերջնականապես հաղթանակեց, և մեր ամբողջ ազգը քրիստոնյա դարձավ 301 թվականին: Հիմնվեցավ և հաստատվեցավ Հայաստանյայց եկեղեցվո Աթոռը ի սուրբ Էջմիածին, զոր կկոչենք աստվածակառույց, որովհետև Գրիգոր Լուսավորչի սքանչելի տեսիլքով է, որ Քրիստոս ինքը իջավ լուսեղեն կերպարանքով և ցույց տվավ այն տեղը, ուր պետք է շինվեր հայկական առաջին եկեղեցին:

Անհավասիկ, սիրելի ժողովուրդ, պատմությունը Հոգեգալուստի հրաշալի դեպքին, աշխարհասասան դեպքին: Հոգեգալուստով Քրիստոսի աստվածային սուրբ Հոգին մնաց աշխարհի մեջ, պատմության մեջ: Վերջին երկու հազար տարիներու մարդկության պատմությունը, քաղաքակրթությունը շաղախված են Քրիստոսի լույսով, այսինքն՝ սուրբ Հոգվո լույսով:

Մեր ժողովուրդի կյանքին մեջ ալ այդպես եղավ: Հայ ժողովուրդը, սուրբ Հոգվով ներշնչված, կերպարանափոխվեցավ ազգովին և դարձավ նոր ժողովուրդ: Հոգեպես, իմացապես պայծառակերպվեցավ և ստեղծեց իր գիրն ու գրականությունը, իր մշակութային արժեքները, իր բարոյական նկարագիրը, ստեղծեց իր պետությունը, և երբ որ հարկ եղավ, չխնայեց իր կյանքը հանուն Հիսուսի, հանուն իր ազատության: Մենք՝ հայերս, այսօր ալ կապրինք այս գիտակցությամբ, այս ոգիով, այս հավատքով: Մեզմե ամեն մեկս, մեր էության մեջ, մեր հոգիին մեջ կկրենք մասնիկ մը սուրբ Հոգիեն և այդ սուրբ Հոգվով է, որ կպահպանենք մեր էությունը, մեր ոգեկանությունը, մեր եկեղեցին, մեր բարոյական սկզբունքները, մեր մշակութային արժեքները: Եվ նույն սուրբ Հոգին է, որ բոլոր հայերը կմիացնե մեկը մյուսին, բոլորը միասին կդառնան մեկ հոգի, մեկ մարմին և մեկ կամեցողություն:

Սիրելի հավատացյալներ, ինչքան երջանիկ ենք Մենք, իբրև Հայոց Հայրապետը, տեսնելով և հաստատելով, որ Ֆրանսայի մեջ մեր ամբողջ ժողովուրդը, Մեր բոլոր զավակները կապրին իրենց եկեղեցիներու շուրջ համախմբված, բոլորը անխտիր կապրին քրիստոնեավայել կյանք, կապրին քրիստոնեական պատվիրաններով, կարգապահ, շինարար քաղաքացիները ըլլալով միաժամանակ իրենց այս նոր հայրենիքին՝ Ֆրանսային:

Մենք այս պահուն կուզենք ձեզի բոլորիդ անգամ մը ալ բերել ողջույն մայր հայրենիքեն և Աստուծո օրհնությունը Մայր Աթոռ ս. Էջմիածնեն և հայաստանցի ձեր քույրերեն և եղբայրներեն, որոնք նույնպես սուրբ Հոգիով ներշնչված հետզհետե ավելի լայն զանգվածներով կմասնակցին այնտեղ մեր եկեղեցական կյանքին: Կրոնական զգացումը, սուրբ Հոգին ընդունած ըլլալու գիտակցությունը հետզհետե կզարգանա այսօրվա Հայաստանի մեջ: Մենք երջանիկ ենք այս իրողությունը հաստատելու, որովհետև կհավատանք, թե ժողովուրդներու կյանքի ապագան այսպեսով պիտի դառնա ավելի խաղաղ, ավելի արդար և երջանիկ:

Այս համոզումով, այս հավատքով է, որ Մենք հորդոր կկարդանք ձեզի հավատարիմ մնալ ձեր նախնյաց սուրբ հավատքին, քրիստոնեական հա-

**վատքին, հավատարիմ մնալ ձեր մայր եկեղեցիին, Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցիին, անոր գլուխը եղող, անոր հիմնաքարը եղող աստվածակառույց Մայր Աթոռ ս. Էջմիածնին:**

**«Շնորհք և սէր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեանսդ». ամեն:**

Թե՛ ս. պատարագին և թե՛ հայրապետական քարոզին ներկա էին քաղաքագլուխ Կլոդ Բիժելը, քաղաքապետարանի պատվարժան անդամները և պաշտոնական այլ անձնավորություններ:

Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետը վերադարձավ Փարիզ՝ նախագահելուց հետո եկեղեցու հոգաբարձության կողմից Իր պատվին տրված ճաշկերույթին Հարություն Սինանյանի բնակարանում: